Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՃԱՇԻ ԺԱՄԱՆԱԿ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՕԾՈՒՄԻՑ ՀԵՏՈ

(12 հունիսի, 2011 թ.)

«Քանզի ո՞վ է մեր յոյսը կամ ուրախութիւնը,
կամ մեր պարծանքի պսակը, եթէ ոչ դուք
ի Տէր, Յիսուս Քրիստոսի առաջ,
Նրա գալստեան ժամանակ, որովհետեւ դուք
էք մեր փառքը եւ ուրախութիւնը»:
(Ա Թեսաղ. Բ 19-20)

Գերաշնորհ, Հոգեշնորհ, Արժանապատիվ հայրեր,

Սիրելի հավատավոր ժողովուրդ.

Անսահման ուրախությամբ եւ գոհության աղոթքով առ Աստված, որ շնորհեց մեզ առիթը վերստին այցելելու Վիրահայոց թեմ, կրկին ողջունում ենք հարազատ զավակներիդ մեր Սուրբ Եկեղեցու եւ բերում ձեզ Հայրապետական մեր օրհնությունը:

Հոգու բերկրանքով ողջունում ենք այստեղ, սիրո ճաշի սեղանի շուրջ ներկայությունը մեր հոգեւոր եղբայրների՝ Վրաց Եկեղեցու ներկայացուցիչների, պետական պաշտոնյաների եւ մտավորականության:

Մենք այսօր քաջալերությունն ունենք առաքյալի խոսքով գոհություն մատուցելու Բարձրյալին, որ իր բոլոր զավակներով հաստատուն ու պայծառ է մեր Սուրբ Եկեղեցին, նաեւ ձեզանով, որ կրում եւ պահպանում եք Վիրահայոց թեմի հարուստ ավանդները: «Քանզի ո՞վ է մեր յոյսը կամ ուրախութիւնը, կամ մեր պարծանքի պսակը, եթէ ոչ դուք ի Տէր, Յիսուս Քրիստոսի առաջ, Նրա գալստեան ժամանակ: Փառք եւ օրհնություն Բարձրյալին, որ մեր Տիրոջ առջեւ փրկության հույսով կանգնելու հավատքը լուսավորում եւ առաջնորդում է հայ եւ վրացի եղբայր ժողովուրդների կյանքը եւ այսօր նորոգվում է ու ամրանում: Ահավասիկ, Թբիլիսիում վերաօծվեց Սուրբ Էջմիածին եկեղեցին, վերաբացվեց «Հայարտուն» մշակութային կենտրոնը՝ իբրեւ վկայություն մեր հավատքի եւ եղբայրական սիրո: Մեր Տիրոջն ու Փրկչին առավել լսելի պիտի լինի մեր միասնական հայցը՝ հանուն Վրաստանի եւ Հայաստանի խաղաղության, մեր եկեղեցիների հաստատունության, մեր հավատքի ու եղբայրության ամրության:

Հավատքն ու եղբայրական սերն են վկայված դարավոր պատմության մեջ Վրաստանի հայկական համայնքի, որը հայոց ամենահին գաղթօջախներից մեկն է: Յոթերորդ դարից ի վեր հայերեն աղոթքը երկինք է բարձրանում Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցուց՝ հայցելով խաղաղություն եւ օրհնություն վրաց հողին, որը հարազատորեն ընդունել է հայ ժողովրդի զավակներին: Հարազատության նույն զգացումով Վրաստանի հայությունը ազնվորեն ծառայել է Վրաստանի փառքին, հզորությանը, բարօրությանը, գիտական առաջընթացին եւ մշակութային պայծառությանը: Վիրահայոց համայնքը վկայողն է հայ-վրացական եղբայրական հարաբերությունների ու համագործակցության, որոնք բարեհույս ընթացքներ եւ բազում բարի արդյունքներ են բերել մեր ժողովուրդների կյանքին:

Միաժամանակ, Վիրահայոց համայնքը վկայողն է մեր ժողովրդի ազգասիրության ու հայրենանվիրումի, որդիական անսակարկ սիրո Սուրբ Էջմիածնի հանդեպ, որտեղ Քրիստոս մեր Տերը հաստատեց հայոց հոգեւոր կյանքի Մայր Աթոռը: Սուրբ Էջմիածնից ճառագող լույսով լուսավորվեցին վիրահայոց եկեղեցիները եւ դպրոցները, որոնցից ծնունդ առնելով, սնվելով ու զորանալով, հայկական կյանքը փարթամորեն աճել ու բարձրացել է Վրաստանի տարբեր շրջաններում եւ առանձնապես Թբիլիսիում, որը 18- րդ դարից մինչ 20-րդ դարասկիզբ հայ մշակույթի նշանավոր կենտրոններից մեկն էր: Թբիլիսիի հետ են կապված հայ գրականության, դպրության ու մանկավարժության, տպագրության ու մամուլի, գեղանկարչության եւ թատրոնի պատմության հարուստ էջեր, որոնցով, ինչպես եւ հայոց մեծերի պանթեոնով մեր ժողովրդի համար նվիրական է Վրաստանի մայրաքաղաքը: Մի քանի դար Թբիլիսիից արծարծվում էին եւ բոցավառվում ինչպես Վրաստանի, այնպես եւ Հայաստանի ազատագրության հույսերը եւ լուսավոր գալիքի ձգտումներն ու ծրագրերը, որոնք խանդավառել ու միավորել են ծագումով եղբայր ու հավատակից մեր ժողովուրդներին:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այսպիսի առատ ու թանկագին հիշատակներն եք պահպանում դուք եւ փոխանցում ձեր զավակներին, այսպիսի հավատաշեն ու հոգեսնունդ ավանդներով եք մասնակցություն բերում համազգային մեր կյանքին եւ ձեզ համար նվիրական Հայրենիք դարձած Վրաստանի կյանքին: Այսօր Հայաստանն ու Վրաստանը ազատ, նոր կյանք են կառուցում, մեր ժողովուրդները ջանքեր են բերում բարգավաճ ու ծաղկուն դարձնելու համար իրենց երկրները: Զորանում են նաեւ բարեկամական հարաբերությունները եւ համագործակցությունը Հայաստանի եւ Վրաստանի միջեւ, որին դուք ձեր հայրերի օրինակով եւ նույն նախանձախնդրությամբ բերում եք ձեր արժանավոր նպաստը: Մեր հոգին ուրախությամբ ու քաջալերությամբ է համակվում տեղեկանալով հոգեւոր եւ ազգային ձեր կյանքը զորացնելու ջանքերի մասին, որոնք բարեջան ձեր առաջնորդի՝ Գերաշնորհ Տ. Վազգեն Սրբազանի առաջնորդությամբ ու խնամքով, Վրաստանում սպասավորող նվիրյալ եկեղեցականների հոգածությամբ կյանքի եք կոչում: Ձեր ձգտումն է նորոգված տեսնել հայկական եկեղեցիները, սրբարար պաշտամունքով եւ աղոթքով լուսավորված, քրիստոնեական եւ ազգային կրթությամբ, հայ մշակույթով շենացած ու պայծառացած տեսնել Վիրահայոց թեմը: Գիտենք եւ ծագող դժվարությունների ու խնդիրների մասին, որոնք խոչընդոտում են համայնքային կյանքը եւ թեմի գործունեությունը, արգելք դառնում եկեղեցիների նորոգմանը, հայեցի կրթության զորացմանը: Վրաց Եկեղեցու եւ պետական իշխանության, նաեւ Վիրահայոց թեմի հետ միասնաբար պիտի ջանանք եւ հույս ունենք հաղթահարել առկա խնդիրները: Միշտ ապավեն ունեցեք հույսն ու հավատքը առ Աստված, եղեք միմյանց աջակից ու զորավիգ, ձեր զավակներին սիրելի դարձրեք հայոց լեզուն եւ պատմությունը, հայկական հարուստ մշակույթը եւ սնուցեք Սուրբ Էջմիածնի հանդեպ ձեր հոգու որդիական սիրով ու նվիրումով:

Մեր հանդիպման այս բերկրալի առիթով Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, սիրելի Սրբազան, թեմում ծառայող հոգեւորականներին, թեմական վարչության անդամներին, Վրաստանում ապրող մեր ժողովրդի բոլոր զավակներին, որ ապրում ու ստեղծում են

հավատքով առ Աստված, հավատարմությամբ հայրենի ժառանգությանը եւ Վրաստանի ու Հայաստանի բարօր ու երջանիկ կյանքի ձգտումներին:

Աղոթում ենք, որ Տերը խաղաղության մեջ պահպանի Վրաստանը եւ օրհնի բոլոր ջանքերը հանուն նրա բարգավաճման ու առաջընթացի, Իր շնորհի ներքո հաստատուն ու պայծառ պահպանի Վիրահայոց թեմը եւ հավատքով զորացյալ, արդար ու բարի գործերում հաստատուն՝ ձեզ բոլորիդ: «Եւ հենց դրանով ճանաչած կլինենք, որ ճշմարտութիւնից ենք, եւ Նրա առաջ կանգնելու վստահութիւն կունենան մեր սրտերը» (Յովհ. Գ 19):

«Շնորք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սէրն Աստուծոյ եւ հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ ընդ ձեզ ամենեսին. Ամէն»: